

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32/5

9 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Խաչիկ Հովհաննիսյանի գանգատը ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 22.09.2014 թ-ի թիվ 6101739 ակտի դեմ:

Ա/Ձ Խաչիկ Հովհաննիսյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ Ֆինանսների նախարարության Կապանի ՏՀՏ պետի 12.08.2014 թ-ի թիվ 6201805 հանձնարարագրով իրականացված հսկիչ գնման արդյունքում կազմված արձանագրության հետ համաձայն չէ, քանի որ հանձնարարագրում նշված հարկային տեսուչները իմ առևտրի սրահ չեն մտել և հսկիչ գնում չեն իրականացրել: Այսինքն, նրանց կողմից կազմված թիվ 6201805 արձանագրությունը չի համապատասխանում ՀՀ ստուգումների մասին օրենքի պահանջներին, այն է՝ առանց տնտեսվարող սուբյեկտի առևտրի օբյեկտ մտնելու կազմվել է հսկիչ գնումների արդյունքների մասին 13.08.2014 թ-ի թիվ 6201805 արձանագրությունը, որը ուղարկվել է փոստով: Տեսուչների կողմից հիմք ընդունելով վերոհիշյալ արձանագրությունը Կապանի ՏՀՏ պետի կողմից 29.08.2014 թ-ին բացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման թիվ 6101739 հանձնարարագիրը, որի հիման վրա հիմք ընդունելով վերոնշյալ արձանագրությունը 29.08.2014 թ-ին կազմվել է ակտի նախագիծ, իսկ 22.09.2014 թ-ին՝ ակտ, որը նույնպես ուղարկվել է փոստով:

Տեսուչների կողմից խախտվել է ստուգումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջին կետի պահանջները, այսինքն՝ նախագծից մինչև ակտի ժամկետը պետք է լինի 10 աշխատանքային օր, սակայն այդ ժամկետը չի պահպանվել:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն Կապանի ՏՀՏ պետի 12.08.2014 թ-ի թիվ 6201805 հանձնարարագրի Ա/Ձ Խաչիկ Հովհաննիսյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 13.08.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6201805 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

հարկային տեսուչ Կ.Բեգլարյանի կողմից 13.08.2014 թ-ին, ժամը 15:25-ին ք.Մեղրի, Զ.Անդրանիկի 32/7 հասցեում գտնվող Ա/Ձ Խաչիկ Հովհաննիսյանին պատկանող խանութից կատարել է հսկիչ գնում 340 դրամի չափով (2 շիշ 0.5լ «Բջնի» տեսակի հանքային ջուր), որի դիմաց վճարված կանխիկ գումարը չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ուսումնասիրությունն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման:

Z հաշվետվություն հնարավոր չի եղել դուրս բերել, քանի որ հսկիչ-դրամարկղային մեքենայում համապատասխան ժապավեն չի եղել: Գնված ապրանքը հարկային տեսուչների կողմից ետ է վերադարձվել և ետ է ստացվել հսկիչ գնման գումարը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ա/Ձ Խաչիկ Հովհաննիսյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ պետի կողմից 29.10.2014 թ-ին հրապարակվել է թիվ 6101739 հանձնարարագիրը, որի համաձայն Ա/Ձ Խաչիկ Հովհաննիսյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 22.09.2014 թ-ի թիվ 6101739 ակտը, որով վերոգրյալ խախտման համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Քննարկման ընթացքում Ա/Ձ Խաչիկ Հովհաննիսյանը նշեց, որ 13.08.2014 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6201805 արձանագրությունում նկարագրվածը չի համապատասխանում իրականությանը, քանի որ 13.08.2014 թ-ին խանութը ընդհանրապես չի աշխատել:

Ա/Ձ Խաչիկ Հովհաննիսյանին Հանձնաժողովի անդամների ուղղված հարցին, թե խանութը փակ է եղել միայն 13.08.2014 թ-ին, թե նաև դրան նախորդող և հաջորդող օրերին, հնչեց պատասխան, որ խանութը փակ է եղել միայն 13.08.2014 թ-ին:

Հարկային տեսուչ Կարեն Բեգլարյանը պնդեց, որ 13.08.2014 թ-ին, ժամը 15:25-ին ք.Մեղրի, Զ.Անդրանիկի 32/7 հասցեում գտնվող խանութից իր կողմից կատարել է 340 դրամի հսկիչ գնում՝ գնվել է 2 շիշ 0.5լ «Բջնի» տեսակի հանքային ջուր, որի դիմաց վճարված կանխիկ գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ընդ որում, հսկիչ գնումը կատարելու պահին Ա/Ձ Խաչիկ Հովհաննիսյանը խանութում չի եղել: Վերջինս ներկայացել է որոշ ժամանակ անց, երբ հարկային ծառայողների կողմից արդեն իսկ ավարտված են եղել խախտման փատն ապացուցելուն ուղղված գործողությունները: Մասնավորապես, ղեկավարվելով ՀՀ կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 6.1 կետի դրույթներով ուսումնասիրությունն իրականացնող պաշտոնատար անձինք վերադարձրել են հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքները, որի վերաբերյալ 13.08.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքում վաճառված ապրանքների հետընդունման թիվ 6201805 ակտը, ինչպես նաև վաճառողից ետ է ստացվել հսկիչ գնման գումարը: Ինչ վերաբերվում է Z հաշվետվությանը, ապա այն հնարավոր չի եղել դուրս բերել ՀԴՄ-ից՝ դրանում համապատասխան ժապավենի բացակայության պատճառով:

Երբ Ա/Ձ Խաչիկ Հովհաննիսյանը ներկայացել է խանութ, ուսումնասիրությունն իրականացնող անձինք ներկայացրել են հսկիչ գնում կատարելու վերաբերյալ հանձնարարագիրը, ինչպես նաև դրա հիման վրա իրականացված հսկիչ գնման արդյունքում կազմված փաստաթղթերի օրինակները, սակայն Ա/Ձ Խաչիկ Հովհաննիսյանը հրաժարվել է որևէ փաստաթուղթ ստորագրել:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ վերոգրյալ խանութի տարածքը տեսահսկվում է: Իրականացված հսկիչ գնման վերաբերյալ եզրակացություն կազմելու

և համապատասխան հետևություններ անելու համար Հանձնաժողովի անդամներն Ա/Ձ Խաչիկ Հովհաննիսյանին առաջարկեցին ներկայացնել այդ պահն արտացոլող տեսագրությունը, նամանավանդ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հսկիչ գնումը իրականացված չլինելու պատճառաբանությամբ նա ի սկզբանե հրաժարվել է որևէ փաստաթուղթ ստորագրել: Նշված առաջարկի վերաբերյալ Ա/Ձ Խաչիկ Հովհաննիսյանը հայտարարեց, որ չի նախատեսել իր կողմից բերված փաստարկներն ապացուցելու համար ներկայացնել նման թեսագրություն, բացի այդ վստահ չէ, թե տեխնիկապես հնարավոր կլինի այն ներկայացնել, թե ոչ:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները, ըստ էության, հիմնավորում են Ա/Ձ Խաչիկ Հովհաննիսյանի կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները խախտած լինելու հանգամանքը, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 22.09.2014 թ-ի թիվ 6101739 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

